

ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի կարիքների համար սարքերի և սարքավորումների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների գնման մրցույթի հայտարարություն /հրապարակվել է 17.12.2013թ.

**ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9 ծածկագրով
ընթացակարգի մասնակիցներին**

Հարգելի գործընկերներ

«ՀՀ-ՏԿՆ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով մրցույթի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով մրցույթի շրջանակներում կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեով, N 505 սենյակ, մինչև 2013թ. դեկտեմբերի 27-ը, ժամը 11:00-ը:

Հայտերը կբացվեն Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեում, N 505 սենյակում, 2013թ. դեկտեմբերի 27-ին, ժամը 11:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել N ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԵՐԻ և ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ № ՀՀ-ՏԿՆ-ՇՀԾՁԲ-11/9-...

ք. Երևան

«___» «___» 2013թ.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և -----ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _____ (_____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ.դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման
նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003150
Հ/Հ 900011003168
ՀՎՀՀ 02578338

ԿԱՏԱՐՈՂ

«-----» --Ը
Հասցե -----
ՀՎՀՀ' -----
Հ/Հ -----
«-----բանկ» ----Ը

Աշխատակազմի ղեկավար

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

Տնօրեն

(ստորագրություն)
Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափարարների համարը	Ծառայությունների անվանումը	Գին
1	<p align="center">Համակարգչի</p> <p>1.1 Դիագնոստիկա</p> <p>1.2 Պրոֆիլակտիկա</p> <p>1.3 Օպերացիոն համակարգի և ծրագրային փաթեթի տեղադրում և կարգաբերում (Win 95/98/200/XP,7,Vista MS Office, acrobat reader, fonts arm/rus, antivirus</p> <p>1.4 Վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում</p> <p>1.5 Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ Cooler</p> <p>1.6 Վնասված HDD ինֆորմացիայի արտահանում</p> <p>1.7 MB նորոգում</p> <p>1.8 MB փոխարինում ներառյալ ինտել 41 չիպսեթ, ՊՍԻ-Էքսպ (Intel 41 chipset, PCI-Exp) կամ համարժեքը</p> <p>1.9 RAM ներառյալ ԴԴՌ-400 1024ՄԲ (DDR400 1024MB) կամ համարժեքը</p> <p>1.10 RAM ներառյալ ԴԴՌ-2 1ԳԲ 800ՄՀՑ (DDR2 1GB 800MHZ) կամ համարժեքը</p> <p>1.11 RAM ներառյալ ԴԴՌ-3 2048ՄԲ 1333ՄՀՑ (DDR3 2048MB 1333MHZ) կամ համարժեքը</p> <p>1.12 SVGA փոխարինում ներառյալ 1ԳԲ ՊԻՍԻԱյ-Էքսպ (1Gb PCI Exp) կամ համարժեքը</p> <p>1.13 HDD փոխարինում ներառյալ <Դ 500ԳԲ ՍԱՏԱ/7200 (HDD 500GB SATA/7200) կամ համարժեքը</p> <p>1.14 DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ (DVD-RW) կամ համարժեքը</p> <p>1.15 Սնուցման բլոկի նորոգում</p> <p>1.16 Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450վ (Power suply unit for P4 Case 450W), կամ համարժեքը</p> <p>1.17 Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 600վ (Power suply unit for P4 Case 600W), կամ համարժեքը</p> <p>1.18 Ցանցային քարտի տեղադրում ներառյալ ցանցային քարտ 10/100 Դ-լինկ (D-link 10/100), կամ համարժեքը</p> <p align="center">Ընդամենը</p>	
2	<p align="center">Անխափան սնուցման սարքի</p> <p>2.1 Դիագնոստիկա</p> <p>2.2 Ղեկավարող սայիկի վերանորոգում</p> <p>2.3 Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը</p> <p align="center">Ընդամենը</p>	
3	<p align="center">Համակարգչային ցանցի</p> <p>3.1 Դիագնոստիկա</p> <p>3.2 Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100 8 պորտ</p> <p>3.3 Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100 16 պորտ</p> <p>3.4 Մալուխի անցկացում ներառյալ մալուխի գինը (զծամետր)</p> <p>3.5 Ցանցային հանգույցի կարգաբերում</p> <p align="center">Ընդամենը</p>	
4	<p align="center">Լազերային տպիչի</p> <p>4.1 Դիագնոստիկա</p> <p>4.2 Պրոֆիլակտիկա</p> <p>4.3 Լիցքավորում լազերային տպիչի ներառյալ տոները HP LJ 1320</p> <p>4.4 Լիցքավորում լազերային տպիչի ներառյալ տոները HP LJ P2055d</p> <p>4.5 Լիցքավորում լազերային տպիչի ներառյալ տոները Canon MF 3220</p> <p>4.6 Թմբուկի փոխարինում ներառյալ լիցքավորմը HP 1320</p>	

	4.7 Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման HP 1320	
	4.8 Թմբուկի փոխարինում ներառյալ լիցքավորումը Canon 3220	
	4.9 Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման Canon 3220	
	4.10 Թմբուկի փոխարինում ներառյալ լիցքավորումը HP LJ P2055d	
	4.11 Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման HP LJ P2055d	
	4.12 Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման HP 1320	
	4.13 Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման Canon MF 3220	
	4.14 Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման HP LJ P2055d	
	4.15 Մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման HP LJ 1320	
	4.16 Մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման Canon MF 3220	
	4.17 Մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման HP LJ P2055d	
	4.18 Վերանորոգում (առանց պահեստամասերի) սև	
5	Պատճենահանող սարքի	
	5.1 Դիագնոստիկա սև	
	5.2 Պրոֆիլակտիկա սև	
	5.3 Վերանորոգում (առանց պահեստամասերի) սև	
	5.4 Լիցքավորում ներառյալ Տոներ Canon 7161	
	5.5 Լիցքավորում ներառյալ Տոներ Canon 2016	
	5.6 Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon iR2230 կամ համարժեքը	
	5.7 Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon 2016 կամ համարժեքը	
	5.8 Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon iR2230 կամ համարժեքը	
	5.9 Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon 2016 կամ համարժեքը	
	5.10 Վառարանի Ֆետրե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի Ֆետրե լիսեռ Canon 2016 կամ համարժեքը	
	5.11 Վառարանի Ֆետրե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի Ֆետրե լիսեռ Canon iR2230 կամ համարժեքը	
	5.12 Թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկ Canon iR2230 կամ համարժեքը	
	5.13 Թմբուկի փոխարինում ներառյալ թմբուկ Canon 2016 կամ համարժեքը	
	5.14 Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ Canon 2016 կամ համարժեքը	
	5.15 Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ Canon iR2230 կամ համարժեքը	
	Ընդամենը	
6	Կոնդիցիոների	
	6.1 Դիագնոստիկա	
	6.2 Պրոֆիլակտիկա	
	6.3 Էսցանման վերացում	
	6.4 Արտահոսքի վերացում	
	6.5 Խլադոցենտի լիցքավորում (ֆրեոն), կամ համարժեքը	
	6.6 Ֆիլտրների փոխարինում ներառյալ ֆիլտրները	
	6.7 Կոմպրեսսորի փոխարինում ներառյալ 12000BTU	
	6.8 Կոմպրեսսորի փոխարինում ներառյալ 18000BTU	
	6.9 Կոմպրեսսորի փոխարինում ներառյալ 24000BTU	
	6.10 Ռեվերսի կլապանի փոխարինում ներառյալ պահեստամասերը	
	6.11 Ռելեյի փոխարինում ներառյալ ռելեյ	
	6.12 Ֆեն-շարժիչի փոխարինում ներառյալ պահեստամասերը	
	6.13 Կառավարման սալիկի վերանորոգում	
	6.14 Էլեկտրոկոնդենսատորի փոխարինում ներառյալ էլեկտրոկոնդենսատորը	
	6.15 Կոնդիցիոների հանում և տեղադրում ներառյալ աշտարակը	
	6.16 Կոնդիցիոների հանում և տեղադրում առանց աշտարակի	
	Ընդամենը	
7	Սառնարանի	

7.1	Դիագնոստիկա	
7.2	Պրոֆիլակտիկա	
7.3	Էցանման վերացում	
7.4	Արտահոսքի վերացում	
7.5	Կոմպրեստորի փոխարինում ներառյալ կոմպրեսորը	
7.6	Ռեելի փոխարինում ներառյալ ռեյեն	
7.7	Ֆեն-շարժիչի փոխարինում ներառյալ պահեստամասերը	
7.8	Կարավառման սալիկի վերանորոգում	
7.9	Էլեկտրոկոնդեսատորի փոխարինում ներառյալ էլեկտրոկոնդեսատորը	
	Ընդամենը	
Ծառայության մատուցման ժամկետները		
Սկիզբը		Ավարտը
Հունվար		Դեկտեմբեր

***Գնային առաջարկը պետք է ներկայացվի յուրաքանչյուր չափաբաժնին համապատասխան՝ մեկ ընդհանուր թվով (գումարով):**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
 ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 2
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011003150
 Հ/Հ 900011003168
 ՀՎՀՀ 02578338

ԿԱՏԱՐՈՂ

«-----» --Ը
 Հասցե -----
 ՀՎՀՀ՝ -----
 Հ/Հ -----
 «-----բանկ» ----Ը

Աշխատակազմի ղեկավար

Տնօրեն

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ
 (ստորագրություն)
 Կ.Տ

 (ստորագրություն)
 Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում				
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը Տարի
1	Համակարգչի	20%	45%	70%	100%	100%
2	Անխափան սնուցման սարքի	20%	45%	70%	100%	100%
3	Համակարգչային ցանցի	20%	45%	70%	100%	100%
4	Լազերային տպիչի	20%	45%	70%	100%	100%
5	Պատճենահանող սարքի	20%	45%	70%	100%	100%
6	Կոնդիցիոների	20%	45%	70%	100%	100%
7	Սառնարանի	20%	45%	70%	100%	100%
Ընդամենը՝		20%	45%	70%	100%	100%

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման
նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003150
Հ/Հ 900011003168
ՀՎՀՀ 02578338

Աշխատակազմի ղեկավար

----- Կ. ԻՍԱԽԱՆՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«-----» --Ը
Հասցե -----
ՀՎՀՀ՝ -----
Հ/Հ -----
«-----բանկ» ----Ը

Տնօրեն

(ստորագրություն)
Կ.Տ

Պատվիրատու

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
 ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական փուն 2
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011003150
 Հ/Հ 900011003168
 ՀՎՀՀ 02578338

Կատարող

«-----» --Ը
 Հասցե -----
 «-----բանկ» --Ը
 Հ/Հ -----
 ՀՎՀՀ -----

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N
 Հ Ա Ն Ձ Ն Մ Ա Ն - Ը Ն Դ ՈՒ Ն Մ Ա Ն

«___» «_____» 2013թ.

Պայմանագրի անվանումը՝
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2013թ.
 Պայմանագրի համարը՝ № -----

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, և Կատարողն՝ ի դեմս «-----» --Ը-ի տնօրեն -----ի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «___» «___» 2013թ.-ից « » « » 2013թ. ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ աշխատանքները.

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը
Ընդամենը՝	-----	-----		-----

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

_____ (ստորագրություն)

_____ (ստորագրություն)

ազգանուն _____

ազգանուն _____

Կ Տ

Կ Տ